ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՄԱՅՐԵՆԻ

## 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

## *1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՆՅՈՒԹԵՐ*

2021

# ԱՇՈՒՆ ՏԱՏԻԿԸ (էջ 21) - 3 ժամ

## Հարցեր՝

- Ի՞նչ գույներ ունի բնությունն աշնանը:
- Քո կարծիքով՝ ինչպիսի՞ն է աշնանային տրամադրությունը: Հիմնավորի՛ր պատասխանդ:
- Ինչո՞վ է նման և տարբեր թեմատիկ նկարի աշունը քո բնակավայրի աշունից:
- Քո կարծիքով՝ թեմատիկ նկարում որտե՞ղ է Աշուն տատիկը: Ինչպիսի՞ն է նա: Ի՞նչ գործեր է կատարում:
- Ինչու՞ է հեղինակը Աշուն տատիկին հենց մայրիկի հետ համեմատում: Մինչև մեկնաբանելը ևս մեկ անգամ կարդա՛ այդ տողը:
- Ի՞նչ է նշանակում «ոսկեհատիկ»: Հնարավո՞ր է որ այդ բառը ուրիշ տարվա եղանակի համար էլ կիրառվի: Է՞լ ինչը կարող է լինել ոսկեհատիկ:
- Ինչու՞ է Աշուն տատիկը դատարկ ձեռքով կանգնում ցրտերի դիմաց:
- Համեմատի՛ր տարվա եղանակները մարդու կյանքի փուլերի հետ:

## Առաջադրանքներ՝

- ✓ Պատմի՛ր թեմատիկ նկարը՝ օգտագործելով *հասունացած, սպիտակափառ, դեղնահեր, բերքառատ, եռուզեռ, քաղցրահամ, հյութալի, ժպտերես* բառերը:
- ✓ Բանաստեղծությունից դու՛րս գրիր 2-ական առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառ:
- ✓

| Առարկա | Գործողություն | Հատկանիշ |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |

✓ Նկարի՛ր քո բնակավայրի աշունը:

Աշունը իմ բնակավայրում՝ ________________________ում

✓ Գրի՛ր բացիկ Աշուն տատիկին:

Աշուն տատիկին









✓ Կազմի՛ր «Աշուն - բառարան»:

| Աշուն - բառարան |
|---|
| ------------------------------------------------------------------------------------ |
| ------------------------------------------------------------------------------------ |
| ------------------------------------------------------------------------------------ |
| ------------------------------------------------------------------------------------ |
| ------------------------------------------------------------------------------------ |
| ----------------------------------------------------------------------------------- |

✓ Տրված գործողություն ցույց տվող բառերը գրի՛ր համապատասխան սյունակներում՝ ըստ տարվա եղանակների:

էտել, քաղել, ջրել, հնձել, փոցխել, ցանել, տնկել, հավաքել, փխրեցնել

| Գարուն | Աշուն |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |

✓ Վերականգնի՛ր նախադասությունները և գրի՛ր:

պես, տատիկը, Մոր, բարի է, աշուն:

----------------------------------------------------------------------------

է, ու, բարիք, բերք, Աշուն, բաժանում, տատիկը:

-----------------------------------------------------------------------------

դաժան, սրտաբաց, ցրտերի, դիմաց, է, զոհ, կանգնում, ու, Նա:

-------------------------------------------------------------------------------

ոչինչ, չի, իր, պահում, Տատիկն, համար:

---------------------------------------------------------------------------------

է, Նա, արևոտ, գույներ, բաժանում:

---------------------------------------------------------------------------------

ու, համ, բերում, հոտ, անուշ, է, Աշունը:

----------------------------------------------------------------------------------

✓ Թեմատիկ նկարից դու՛րս գրիր 3 բառ, որոնց մեջ ձայն կա և նկարագրի՛ր:

| Բառ | Նկարագրություն |
|---|---|
| տերևներ | դեղնում են, չորանում են, թափվում են, խշշում են, օդում պարում են |
| | |
| | |
| | |

✓ Տրված աշնանային բառերն ու արտահայտությունները գրի՛ր ըստ տրամադրության՝ համապատասխան սյունակներում:

Անձրև, նախշուն, եղյամ, չորացած տերև, պարող տերև, բերքառատ այգի, ցուրտ օրեր, թանձր մշուշ:

| ☺ | ☹ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |

✓ Լրացրու՛ աղյուսակը:

| Ի՞նչ տեսա: | Ի՞նչ լսեցի: |
|---|---|
| Ի՞նչ զգացի: | Նոր վերնագիր |

## ՉԱՐԱՃՃԻ Չ ՏԱՌԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ (էջ 14 -15) - 4 ժամ

**Առակ փոքրիկ տղայի և ծովային աստղիկների մասին**

Մի մարդ քայլում էր ծովափին և տեսավ մի փոքրիկ տղայի, որն ինչ-որ բան էր բարձրացնում ավազի վրայից ու նետում ծովը: Երբ նա ավելի մոտեցավ տղային, տեսավ, որ նա ավազի վրայից ծովային աստղիկներ է վերցնում: Դրանք թափված էին տղայի շուրջբոլորը. թվում էր, թե ավազի վրա միլիոնավոր աստղիկներ կային՝ տարածված կիլոմետրերով:

-Ինչո՞ւ ես ծովը նետում այդ աստղիկներին,- հարցրեց մարդը՝ տղային մոտենալով:

-Եթե նրանք մնան ափին մինչև առավոտ, երբ սկսվում է տեղատվությունը, ապա բոլորը կզոհվեն,- պատասխանեց տղան՝ առանց դադարեցնելու իր գործը:

-Բայց դա պարզապես միամտություն է,- բացականչեց մարդը,- շու՛րջդ նայիր, այստեղ հազարավոր ծովային աստղիկներ կան, քո ջանքերը ոչինչ չեն փոխի:

Տղան բարձրացրեց հերթական ծովային աստղիկը, մի վայրկյան մտածեց և գցելով ջուրը՝ ասաց.

-Ոչ, իմ փորձերը շատ բան կփոխեն… այս աստղիկի համար:

Այդ ժամանակ մարդը նույնպես բարձրացրեց մի աստղիկ և գցեց նրան ծովը, հետո՝ ևս մեկը:

Ուշ երեկոյան ծովափին արդեն մարդկանց մեծ բազմություն կար և նրանցից յուրաքանչյուրը մի-մի աստղիկ էր վերցնում և ծովը նետում, իսկ երբ արևը ծագեց, ծովափին արդեն ոչ մի չփրկված աստղիկ չէր մնացել:

***Միշտ հիշեք, որ մենք բոլորս կարող ենք մեծ փոփոխությունների պատճառ դառնալ, եթե միայն չթերագնահատենք մեր փոքրիկ դերը այդ գործում:***

Հարցեր՝

- Ինչո՞ւ բառերին դուր չեն գալիս չ-ի չարաճճիությունները:
- Ի՞նչ է ասում չ տառը երեխաներին:
- Նրա պատճառով ո՞ր բառերի իմաստն է փոխվում տեքստում: Բե՛ր նմանատիպ բառերի օրինակներ:
- Ի՞նչ գործողություններ է կատարում չ-ն:
- Ինչպե՞ս չ-ն ընկերացավ տառերի հետ: Դու ու՞մ հետ կուզենայիր ընկերանալ: Ինչու՞:

- Ինչպե՞ս փչակում կձմեռի չ-ն, ո՞ր տառերի հետ կընկերանա և ի՞նչ բառեր կստեղծեն միասին:

Առաջադրանքներ՝

- ✓ Երբ գարունը գա, չ տառը դուրս գա փչակից, շատ փոխված կլինի: Երևակայի՛ր և պատմի՛ր նրա մասին:

Ես Չ տառն եմ, ողջու՛յն:



- ✓ Չ-ն ինչպե՞ս փչակ սարքեց: Բեմականացրե՛ք:



- ✓ Նկարի՛ր չ տառի չարաճճիությունները և հորինի՛ր հեքիաթ, թե է՞լ ինչը կարող է չարաճճի լինել:



✓ Ի՞նչ լավ և վատ գործեր է կատարում չ-ն՝ միանալով այլ տառերի: Գրի՛ր համապատասխան սյունակներում:

| ☺ | 😐 |
|---|---|
| թռչկոտել | փչացնել |
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

✓ Տեքստից դո՛ւրս գրիր իմաստով հակառակ բառերը:
*Օրինակ՝ սովորել – չսովորել:*

---------------------------------------------------------

---------------------------------------------------------

--------------------------------------------------------

---------------------------------------------------------

---------------------------------------------------------

✓ Չ տառի օգնությամբ տեքստում գտի՛ր տրված բառերի իմաստով մոտ բառերը:

**ծառի բնի խոռոչ** - -------------------------
**չկրթվել** - --------------------------
**չըմպել** - ---------------------------
**չսնվել** - -------------------------

# ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ (էջ 56) - 3 ժամ

## Հարցեր՝

- ✓ Ի՞նչ էր ուզում իմանալ հարուստը հովիվից:
- ✓ Ուտելուց հետո ի՞նչ են անում հարուստն ու հովիվը:
- ✓ Հովիվը ե՞րբ պատասխանեց հարուստի հարցին:
- ✓ Տեքստի նկարազարդումը օգնե՞ց ձեզ: Հաստատվեցի՞ն ձեր կանխատեսումները տեքստի բովանդակության վերաբերյալ:
- ✓ Ովքե՞ր էին տեքստի հերոսները: Ի՞նչ է առաջարկում հովիվը հարուստի հարցին պատասխանելուց առաջ:
- ✓ Ըստ հովիվի՝ ինչու՞ էր հարուստը հիվանդանում:
- ✓ Հասկացա՞ք հարուստի սխալը: Տեքստի ո՞ր տողերով կարելի է հիմնավորել պատասխանը:
- ✓ Նշի՛ր այնպիսի բան, որի հետ դու համաձայն չես:
- ✓ Ի՞նչ խորհուրդ տվեց առողջ հովիվը հիվանդ հարուստին:
- ✓ Ի՞նչ եք կարծում, հարուստը կհետևի՞ հովիվի խորհրդին: Հիմնավորե՛ք կարծիքը:

## Առաջադրանքներ

- Գտե՛ք այն հատվածը, որը պատմում է, թե ինչ են եղել նրանց ուտելիքները որոշ ժամանակ անց:
- Գտե՛ք այն հատվածը, որը պատմում է, թե ինչպես են սարերում ման գալիս հարուստն ու հովիվը:
- Պատմվածքի ո՞ր հատվածներն են պատկերված նկարներում: Կարդացե՛ք այդ հատվածները:
- Ի՞նչ զգացումներ ունեցար: Շարունակի՛ր նախադասությունը.

Ես զգացի ________________________________________________________________:

- Գնահատի՛ր հովվի արարքը: Տեքստի ո՞ր տողերն են նկարագրում այդ հատվածը, ընթերցի՛ր:
- Ամբողջացրու՛ նախադասությունները:

ա) Հարուստը հիվանդ էր, որովհետև ________________________________________ :

բ) Հովիվն առողջ էր, որովհետև ____________________________________________ :

գ) Այս պատմվածքից ես սովորեցի, որ _______________________________________ :

- Առանձին սյունակներում գրի՛ր, թե ինչպիսին է հարուստը, ինչպիսին է հովիվը:

Գեր, առողջ, ագահ, քչակեր, շատակեր, հիվանդ, արագաշարժ, աշխատասեր, դանդաղաշարժ, բարեկազմ:

| Հովիվ | Հարուստ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |

- Շարունակի՛ր:

հարուստ -- աղքատ
հիվանդ -- առողջ
վախկոտ -- ____________________
տգեղ -- ____________________
թույլ -- ____________________

- Տեքստից դուրս գրի՛ր՝ առարկա, գործողություն ցույց տվող բառեր և լրացրու՛ աղյուսակը:

| **Առարկա** | **Գործողություն** |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |

- Հերոսներին նկարի՛ր քո պատկերացմամբ:

- Գրի՛ր նամակ հարուստի անունից աշխարհի բոլոր հարուստներին:



## ԱՆԱՀԻՏՆ ՈՒ ՇՆԻԿԸ (էջ 78) - 3 ժամ

Հարցեր՝

- ✓ Ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունեցել դեպքը:
- ✓ Ինչու՞ երեխաների ուրախությանը չափ չկար:
- ✓ Ի՞նչ պատմեց Անահիտը շնիկի մասին, արդյոք նա ստե՞ց:
- ✓ Ինչու՞ էր մայրիկը ժպտում:
- ✓ Դու համաձա՞յն ես մայրիկի հետ. Անահիտը բարի՞ էր:
- ✓ Անահիտն արթնանալուց հետո ինչու՞ էր կարծում, որ ինքը դեռ երազում է:
- ✓ Ի՞նչ կպատահեր, եթե մայրիկը շնիկին ներս չթողներ:
- ✓ Քո կարծիքով՝ շնիկն իրեն լա՞վ էր զգում Անահիտենց տանը: Ինչու՞:
- ✓ Կա՞ պատմվածքում այնպիսի մի բան, որը քեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել:
- ✓ ***Ընթերցի՛ր նաև շնիկի մասին պատմող տեքստը, հետո համեմատիր՝ «Անահիտն ու շնիկը» տեքստի հետ:***

Շնիկը

Նա ծնվեց մի նեղ ու կեղտոտ փողոցի անկյունում: Ընդամենը չորս տարեկան էր, երբ ծնողները լքեցին շնիկին, և նա այս մեծ ու փոքր աշխարհում մնաց միայնակ:

Գնալով կյանքը դժվարանում էր: Ճոխ ռեստորանների ու մսի խանութների աղբամանները շրջապատված էին տարեց շների ոհմակներով: Ամենահամարձակները հափշտակում էին եղած - չեղածը, իսկ փոքրերն ու թույլերը բավարարվում էին մնացորդներով:

Ամեն երեկո շնիկը թափառում էր հին ու մռայլ փողոցներում ու նրբանցքներում, մտնում այգիներն ու պարտեզները: Մարդիկ նայում էին ու լուռ անցնում: Ոչ մեկը չէր օգնում կամ ուտելու որևէ բան տալիս: Մութն ընկնելուն պես թափառական շնիկը մտնում էր իր ստվարաթղթե տնակն ու քնում: Արևը ծագելուն պես ամեն ինչ սկսվում էր նորից:

Մի օր էլ շնիկն իր ծանոթ մայթեզրին տարօրինակ, բայց իր համար գեղեցիկ մի բան տեսավ: Հաստատ ուտելիք չէր: Փորձեց հարմարեցնել դնչիկին:

«Ի՜նչ տարօրինակ է. ամեն ինչ մեծ ու գեղեցիկ է երևում»,- մտածեց շնիկը:

Տարօրինակ առարկան դնչիկին՝ շնիկը մտավ ծաղկավաճառի մոտ: Ծաղկավաճառը նայեց նրա ականջներին և ժպտաց:

- Ի՜նչ գեղեցիկ է կյանքը,– ուրախացավ շնիկն ու գնաց մտավ խաղալիքների խանութը:

Հետո զբոսնեց քաղաքի մեծ զբոսայգում: Ակնոցի հետևից երկու խոշոր աչքեր նայում էին լողավազանում չարչարվող ձկներին: Նրանք, պատեպատ զարկվելով, ուզում էին ազատվել քարե ավազանի ճանկերից:

Ուրախացած շնիկը քայլում էր, երբ փողոցի մի անկյունից սրինգի հնչյուններ լսեց: Շնիկը դանդաղ մոտեցավ:

- Բարև, շնի՛կ,- ասաց երաժիշտը և ուրախ ավելացրեց,– ուրեմն դու՞ ես գտել իմ ակնոցը: Առավոտյան ես այն կորցրի. գրպանիցս էր ընկել: Կվերադարձնե՞ս: Առանց ակնոցի շատ եմ դժվարանում:

– Ներեցե՛ք, բայց չեմ կարող, որովհետև ակնոցը կյանքս փոխեց: Առաջ ամեն ինչ մռայլ էր ու տխուր, մարդիկ ինձ չէին սիրում, իսկ հիմա ուրիշ է:

Երաժիշտը լսեց նրան, ապա ասաց.

– Լսի՛ր, փոքրի՛կ, եթե դու մենակ ես այս աշխարհում և տխուր ես, արի՛ ընկերանանք: Ընկերությունը լավ բան է. ես հավատացած եմ, որ ընկերոջ հետ աշխարհը կսիրես առանց ակնոցի էլ:

Շնիկը մտածեց, հետո նայեց ծեր երաժիշտին.

- Դե ինչ, վերցրու՛ ակնոցդ,– ասաց ու դժվարությամբ բաժանվեց ակնոցից:

– Ե՛կ, բարեկա՛մս, գնանք: Տանը մեզ են սպասում:

Այդ օրվանից շնիկը տխուր չէր, ապրում էր երջանիկ, որովհետև էլ մենակ չէր, գտել էր իր մեծ բարեկամին ու ընկերոջը, որը սիրեց ու գուրգուրեց նրան:

**Առաջադրանքներ՝**

- Անահիտը մայրիկին չասաց, որ ուզում է շնիկին տուն բերել, բայց մայրիկը հասկացավ: Քո կարծիքով որ տողերից հասկացավ մայրիկը, կարդա՛:
- Բնութագրի՛ր Անահիտին՝ պատասխանելով համապատասխան հարցերին և ստեղծի՛ր փոքրիկ բանաստեղծություն:



-------------------------- /ո՞վ/,

---------------------- /ինչպիսի՞/, --------------------/ինչպիսի՞/,

------------------- /ի՞նչ արեց/, ------------------ /ի՞նչ արեց/, ------------------

/ի՞նչ արեց/, ------------------- ----------------- ----------------- -------------------,

/4-բառանոց մի մի՛տք գրիր նրա մասին/ ----------------------------- /ո՞վ էր Անահիտն իր մայրիկի համար/:

✓ Տեքստից դու՛րս գրիր գործողություն ցույց տվող 4 բառ և գրի՛ր դրանց հակառակ իմաստն արտահայտող բառերը:

*Օրինակ՝ տեղաց - դադարեց:*

-----------------------------------------------

-----------------------------------------------

-----------------------------------------------

-----------------------------------------------

✓ Գրի՛ր 3-ական զգացմունք արտահայտող բառ, որոնք զգում էր Անահիտը և կզգայիր դու, երբ լինեիր Անահիտի փոխարեն: Օգտվի՛ր զգացմունք արտահայտող պատկերներից:

😃 😍 🙄 😊 🤗

| Անահիտ | Ես |
|---|---|
| | |
| | |
| | |

✓ Գրի՛ր մեկ նախադասություն Անահիտի մայրիկի մասին՝ բնութագրելով նրան:

Անահիտի մայրիկը-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

✓ Նմանեցրու՛ Անահիտի մայրիկին քո մայրիկին և լրացրու՛ համապատասխան տողերը:



Իմ մայրիկը նման է Անահիտի մայրիկին,
Որովհետև ուզում է, որ ես -----------------------------------------,
Ժպտում է, երբ ես -----------------------------------------------------,
Ուրախանում է, երբ ես ------------------------------------------------,
Երջանիկ է, երբ ես -----------------------------------------------------:

✓ Տեքստից դու՛րս գրիր տրված բառերի իմաստով մոտ բառերը:

**զարթնեց** - --------------------
**մանուկներ** - --------------------
**սրտացավ** - ---------------------
**նկատեց** - ---------------------

- Քո կարծիքով, է՞լ ինչ բարի գործեր է անում Անահիտը:

Անահիտը ------------------------------------------------------------------------------:
Անահիտը-------------------------------------------------------------------------------:
Անահիտը-------------------------------------------------------------------------------:

- Ամբողջացրու՛ նախադասությունները:

Շնիկի մասին լսելուց հետո մայրիկը ժպտաց, որովհետև ---------------------------------
------------------------------------------------------------------------------------:
Առավոտյան մայրիկն էլ ավելի պայծառ ժպտաց, քանի որ -------------------------------
------------------------------------------------------------------------------------:

- Գտի՛ր և դո՛ւրս գրիր:

ա. Ո՞րն է տեքստի ամենակարևոր նախադասությունը:
-----------------------------------------------------------------------------------------
բ. Ո՞րն է տեքստի ամենակարևոր բառը:
-----------------------------------------------------------------------------------------

-  Հորինի՛ր ոչ ծավալուն պատմություն «Անահիտի երազը» վերնագրով՝ դիտելով տեքստի նկարազարդումը:
- Քո կարծիքով՝ այս պատմվածքը գրելով հեղինակն ի՞նչ է ուզում քեզ սովորեցնել:



Ես սովորեցի, որ ----------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------- :

# ՈՒ՞Մ ԾԱՌՆ Է (էջ104) - 3 ժամ

Հարցեր՝

- Ի՞նչ եք կարծում, ծառերը ունե՞ն կյանք, թե՞ ոչ: Հիմնավորե՛ք պատասխանը:
- Ինչո՞վ են ծառերը տարբերվում մյուս բույսերից:
- Երբևէ հոգ տարե՞լ ես ծառի նկատմամբ, եթե՝ այո, ապա ի՞նչ էիր զգում այդ ժամանակ:
- Ովքե՞ր մասնակցեցին ծառատունկին: Նշի՛ր հերոսներին:
- Ի վերջո, տնկին ու՞մ շնորհիվ ծառ դարձավ:
- Ո՞ր հարցի շուրջն էին վիճում երեխաները:
- «Աշոտը հոգատար էր ու աշխատասեր». սա կարծի՞ք է, թե՞՝ փաստ: Հիմնավորի՛ր:
- Հեղինակն ինչպե՞ս հասկացրեց, որ Աշոտը քրտնաջան խնամել է տնկին: Ի՞նչ նկատի ունի հեղինակը՝ ասելով, որ տերևին Աշոտի քրտինքն է կանաչում:
- Քո կարծիքով՝ տղաներից ո՞վ էր իրավացի:
- Ի՞նչ ես կարծում, ի՞նչ է սովորեցնում տեքստը:
- Ընթերցի՛ր տղաների խոսքերը՝ նրանց մտքերին և արարքներին համապատասխան հնչերանգով, արա՛ համապատասխան շարժումներ և դիմախաղ:
- Համեմատի՛ր Աշոտին քեզ ծանոթ այլ ստեղծագործությունների երեխաների հետ:
- Պատմի՛ր՝ ի՞նչ կլիներ, եթե Աշոտն էլ տղաների նման մոռանար տնկին:
-  Եկե՛ք պատկերացնենք, որ ծառերը հանկարծ անհետացել են երկրի վրայից: Ի՞նչ կլինի այդ դեպքում: Կփոխվի՞ արդյոք մեր կյանքը: Իսկ իրականում կարո՞ղ են ծառերն անհետանալ, թվարկի՛ր դեպքեր:

Առաջադրանքներ՝

- ***Տնկին զորացել է*** արտահայտության մեջ ***զորացել*** բառը փոխարինի՛ր իմաստով մոտ այլ բառերով:

Տնկին ---------------------------------------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------------------------------------------

- Ամբողջացրու՛ նախադասությունը՝ գրելով քո կարծիքը:

**Աշոտը հոգատար էր ծառի նկատմամբ, որովհետև** ----------------------------------------
---------------------------------------------------------------------------------------------------

✓ Օգտվելով բանաստեղծությունից՝ տղաներին նամակ գրի՛ր, թե ինչպես անեն, որ տնկին ծառ դառնա:

Սիրելի՛ տղաներ, պետք է ----------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
---------------------------------------------------------------------------
--------------------------------------------------------------------------

✓ Վերականգնի՛ր առածը: Մեկնաբանի՛ր: Դարձրու՛ վերնագիր և հորինի՛ր ոչ ծավալուն պատմվածք կամ հեքիաթ՝ վերնագրին համապատասխան:



ծառից  չի  ընկնում:  Պտուղը  հեռու

------------------------------------------------------------------------------------------

✓ Տեքստից դու՛րս գրիր 5 պարզ բառ:

| Պարզ բառեր |
|---|
| օր |
| |
| |
| |
| |
| |

✓ Տրված պարզ բառերին ավելացնելով -*ենի* ածանցը՝ ստացի՛ր ածանցավոր բառեր:

| Պարզ | Ածանցավոր |
|---|---|
| տանձ | տանձենի |
| սերկևիլ | |
| նուռ | |
| ընկույզ | |
| հոն | |

✓ Տրված ածանցավոր բառերի ընկեր- պարզ բառերը գտի՛ր տեքստում և դու՛րս գրիր:

| Ածանցավոր բառեր | Պարզ բառեր |
|---|---|
| կանաչեղեն | կանաչ |
| օրական | |
| ջրային | |
| անծանոթ | |
| թևիկներ | |

## ՈՉ ՄԻ ԲԱՆԻՑ ՄԱՐԴՈՒԿԸ (էջ 144-145) - 4 ժամ

**Հարցեր՝**

- ✓ Քո կարծիքով՝ հեղինակն ինչո՞ւ է մարդուկին անվանում «ոչ մի բանից մարդուկ»:
- ✓ Ինչու՞ էր մկնիկն էլ ոչ մի բանից: Ինչու՞ նա կատվից չէր վախենում:
- ✓ Մկնիկն ինչո՞ւ էր միայն պանրի անցքերն ուտում:
- ✓ Ինչու՞ պտտվեց ոչ մի բանից մարդուկի գլուխը:
- ✓ Գլուխն ինչու՞ պատին տվեց մարդուկը:
- ✓ Ի՞նչ պատահեց մարդուկին, ինչու՞ քնեց:
- ✓ Ի՞նչ երազ տեսավ ոչ մի բանից մարդուկը:
- ✓ Ինչի՞ց իմացար, որ այս պատմությունն անիրական է:
- ✓ Կա՞ հեքիաթում այնպիսի բան, որը քեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել:
- ✓ Քո կարծիքով՝ ո՞րն է այս պատմության ամենազվարճալի հատվածը:
- ✓ Կարդա՛ հեքիաթը և համեմատի՛ր ստեղծագործությունների հերոսներին:

**Կարևորը գործով պետք է մարդ լինես**

– Ի՞նչ ես ուզում դառնալ, հարցրեց մկնիկին մայրիկը:

- Փիղ,– պատասխանեց մկնիկը:

- Ապրես,- ուրախացավ մայր մուկը:– Մենք մուկ մնացինք, իսկ քեզ համար բոլոր ճանապարհները բաց են: Միայն թե դու լավ սովորիր:

Եվ մկնիկը սովորում էր, սովորում…

– Միշտ պետք է ձգտել ինչ-որ մեծ և լուսավոր բանի,– ասում էր մկնիկի ուսուցչուհին: Այ, փիղ կդառնաս, և ամեն ճանապարհ քեզ համար բաց կլինի:

Մկնիկն ավարտեց դպրոցը, գնաց փղերի դպրոց: Ավարտեց նաև փղերի դպրոցը ու ստացավ փղի վկայական: Սակայն ոչ ոք նրան փղի տեղ աշխատանքի չէր ընդունում, իսկ մկնիկ աշխատել նա չէր ուզում: Մի անգամ մկնիկը հանդիպեց փղին և հարցրեց.

- Դու ինչպե՞ս ես փիղ դարձել:

- Ես փիղ եմ ծնվել,– պատասխանեց փիղը:

- Իսկ երբ փոքրիկ էիր, ի՞նչ էիր ուզում դառնալ,– նորից հարցրեց մկնիկը:

- Երազում էի մարդ դառնալ,– հպարտ պատասխանեց փիղը:

– Իսկ ինչո՞ւ չդարձար մարդ,– զարմացավ մկնիկը:

- Դարձել եմ,– նորից հպարտացավ փիղը: Ես մի անգամ փրկեցի խեղդվող երեխաների: Բոլորն ինձ ասացին, որ ես իսկական մարդ եմ:

- Դե՜, դու շատ մեծ ես, փիղ, երկար կնճիթ ունես…

- Տեսքը կապ չունի,– մկնիկին խրատեց փիղը: Կարևորը գործով պետք է մարդ լինես:

✓  Եթե ստեղծեիր մի խաղ ոչ մի բանից: Ի՞նչ անուն կդնեիր խաղին: Ու՞մ հետ կխաղայիր այդ խաղը: Պատմի՛ր ընկերներիդ:

✓ Հորինի՛ր Ջաննի Ռոդարիի պատմության շարունակությունը, ուրիշ ու՞մ կարող է հանդիպել ոչ մի բանից մարդուկը:

✓  Երբևիցե փորձե՞լ ես ավազով մարդուկ պատրաստել, հորինի՛ր հեքիաթ «Ավազե մարդուկը» վերնագրով և պատմի՛ր ընկերներիդ:

**Առաջադրանքներ՝**

✓ Կազմի՛ր 3 նախադասություն տեքստի թեմատիկ նկարների շուրջ և գրի՛ր:

---------------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------------

✓  Լրացրու՛ համապատասխան տողերը և ստացի՛ր փոքրիկ պատմվածք:

Իմ ճանաչած ամենահետաքրքիր մարդը, որին ոչ ոք չի տեսել, ------------------------------------ է: Նա սիրում է ---------------------- -------------------------------------------------------------------,
չի սիրում ------------------------------------------------------------:
Նա նման է -------------------------------------------------------------:
Իմ կարծքով՝ նա կարիք ունի-----------------------------------------:

- ✓ Տրված բառաշարքում ընդգծի՛ր այն բառերը, որոնց հանդիպել ես տեքստում և առանձին սյունակներում գրի՛ր պարզ, ածանցավոր բառերը:

Թագ, խնձորենի, ներկ, մկնիկ, պատ, ճանապարհ, բեղեր, հեքիաթային, իշխան, մարդուկ, աշակերտուհի:

| Պարզ բառեր | Ածանցավոր բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

- ✓ Գտի՛ր առաջին սյունակի բառերի հակառակ իմաստն արտահայտող բառերը երկրորդ սյունակում և գծով իրա՛ր միացրու:

| | |
|---|---|
| սուր | ատել |
| նուրբ | խանգարել |
| սիրել | պաշտպանվել |
| օգնել | բութ |
| հարձակվել | կոպիտ |

- ✓ Կազմի՛ր իմաստով մոտ բառազույգեր և միացրու՛ գծով:

| | |
|---|---|
| օդանավ | կայտառ |
| ժիր | շոյել |
| գուրգուրել | երփներանգ |
| գույնզգույն | ինքնաթիռ |

## ԿՈՐԱԾ ՕՐԸ (էջ 147) - 3 ժամ

**Հարցեր՝**

- ✓ Քո կարծիքով՝ կարո՞ղ է օրը կորչել: Հիմնավորի՛ր:
- ✓ Նկարագրի՛ր քո առօրյան:
- ✓ Քո ընկերը երբևիցե ունեցե՞լ է կորած օր: Հիմնավորի՛ր՝ ինչու՞ ես այդպես կարծում:
- ✓ Ովքե՞ր էին տեքստի հերոսները:
- ✓ Ինչու՞ զարմացավ Վարդանը: Ո՞ր հարցի պատասխանն էր նա ուզում իմանալ:
- ✓ Ո՞ր օրն է կորած համարում Վարդանի եղբայրը:
- ✓ Ինչպե՞ս կբացատրես դու Վարդանին, թե՝ ինչ է կորած օրը:
- ✓ Դրանից հետո ի՞նչ հասկացավ Վարդանը:
- ✓ Ինչու՞ է պատմվածքը կոչվում «Կորած օրը»: Դու ի՞նչ վերնագիր կդնեիր պատմվածքին:
- ✓ Կա՞ պատմվածքում այնպիսի մի բան, որը քեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել:

**Առաջադրանքներ՝**

- ✓  Ի՞նչ կարելի է ասել Վարդանի և նրա եղբոր բնավորության մասին: Տեքստի ո՞ր տողերն են օգնում պատասխանել այս հարցին: Բնութագրի՛ր նրանց:

| Վարդան | եղբայր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |



✓ Հորինի՛ր փոքրիկ պատմվածք «Գործը վաղվան մնաց, իմացիր կորավ գնաց» վերնգրով: Պատմի՛ր ընկերներիդ:



✓ Թվարկվածներից որո՞նք ես դու կատարում դպրոցից տուն գնալուց հետո: Համարակալի՛ր ըստ հերթականության և արտագրի՛ր:

| | |
|---|---|
| ❑ Խաղում եմ դրսում:<br>❑ Լվացվում եմ:<br>❑ Ճաշում եմ:<br>❑ Գիրք եմ կարդում:<br>❑ Նկարում եմ:<br>❑ Հեռուստացույց եմ դիտում:<br>❑ Օգնում եմ մայրիկիս:<br>❑ Ընթրում եմ:<br>❑ Խաղում եմ տանը:<br>❑ Կատարում եմ տնային առաջադրանքներս: | |

✓  Առանձին դրվագներով պատկերի՛ր սեփական կյանքից մեկ օր և ներկայացրու՛ ընկերներիդ:

ԻՄ ՕՐԸ

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

✓  Առանձին սյունակներում գրի՛ր պարզ և ածանցավոր բառերը:

Աղջիկ, վազր, մայրենի, արջ, օդային, բլրակ, անտուն, առու, ձորակ:

| Պարզ բառեր | Ածանցավոր բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |



✓ Գտի՛ր նույն արմատն ունեցող բառերը և խմբավորի՛ր առանձին սյունակներում: Քանի՞ խումբ ստացար:

Վարդուհի, տնական, ջրիկ, գրավոր, անտուն, վարդենի, գրիչ, ջրալի, տնային:

| 1-ին խումբ | 2-րդ խումբ | 3-րդ խումբ | 4-րդ խումբ |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |



✓ Տեքստից դու՛րս գրիր հիմնական միտքն արտահայտող նախադասությունը:

-----------------------------------------------------------------------------------------------------

-----------------------------------------------------------------------------------------------------

## Թեմայի ամփոփում - 2 ժամ

### Հարցեր՝

- ✓ Ի՞նչ բարի գործերի մասին լսեցիր այս թեման ուսումնասիրելիս:
- ✓ Ո՞ր դասանյութում ուսուցանված բարի գործը դու կկատարես: Ինչու՞:
- ✓ Ո՞րն է այս թեմայի՝ քեզ ամենից շատ դուր եկած դասանյութը: Ինչու՞:
- ✓ Այս թեմայի ո՞ր հերոսին ես նմանեցնում քեզ, ընկերոջդ: Ինչու՞:
- ✓ Ի՞նչը կփոխես քո սովորությունների մեջ այս դասանյութերն անցնելուց հետո: Ինչու՞:
- ✓ Ո՞վ է քո շրջապատի ամենահոգատար և աշխատասեր մարդը: Ինչու՞ ես այդպես կարծում: Նշի՛ր այդ մարդու մի քանի որակ կամ կարողություն:

### Առաջադրանքներ՝



- ✓ Դու ի՞նչ լավ գործեր ես կատարել: Գրի՛ր դրանցից մեկի մասին:

Մի անգամ ես ------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------

- Նկարի՛ր այս թեմայի՝ քո ամենասիրելի հերոսին և բնութագրի՛ր նրան։

-------------------------------------------------
-------------------------------------------------

----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------
----------------------- ---------------------------

✓ Գրի՛ր այս թեմայի այն հերոսների անունները, որոնք քո կարծիքով այսպիսին են.

ա. ամենախելացի -----------------------, դ. ամենաչարաճճի -----------------------,
բ. ամենահոգատար ---------------------, ե. ամենաաշխատասեր------------------,
գ.ամենաանիրական---------------------, զ. ամենաառատաձեռն------------------

Հիմնավորի՛ր կարծիքդ ըստ նրանց արարքների։

✓  Ի՞նչ առած-ասացվածքներ սովորեցի այս թեմայից, գրի՛ր:

✓ Այս թեմայի հերոսներին բաժանի՛ր երկու խմբի: Մի խմբում առանձրացրու՛ քո կարծիքով լավ արարքներ կատարածներին, իսկ մյուս խմբում՝ վատ:

|  |  |
|---|---|
| | |

✓ Յուրաքանչյուր նկարի շուրջ գրի՛ր 1-ական առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառ: Ո՞ր դասանյութերը կնմանեցնես այս նկարների բովանդակությանը: Ինչու՞ ես այդպես կարծում:

  

| Առարկա | Գործողություն | Հատկանիշ |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

✓ Դասանյութերում գտի՛ր և գրի՛ր տրված բառերի հակառակ իմաստն արտահայտող բառերը:

չար ----------------------
հիշեցին ----------------------
դասավորել ----------------------
աղքատ ----------------------

✓ Տրված պարզ բառերը միացնելով համապատասխան ածանցներին՝ ստացի՛ր ածանցավոր բառեր:

գործ իչ ------------------------------
ընկույզ արան -------------------------------
սրբել ենի -------------------------------
դաս արար ------------------------------

✓ Գրի՛ր տրված բառերին իմաստով մոտ բառերը՝ հիշելով թեմայի հերոսների բնութագրերը:

չարաճճի --------------------------
անկուշտ --------------------------
բարի --------------------------
ջանասեր --------------------------